



ԱՐՇՈՒՒ

ԱՐՇՈՒՒ

ԹԱՌՆԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՐ
ԲԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԻՆ Ի ՂԱՆՏՈՍՊ


ԹԻՒ Գ - ՓԵՏՐՊԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԻՒՍՐԻՒՏԱՐ

ԸՆԴ ՀՈԳԱՆԵԱՒ ՍՈՒՐԲ ԽԱԶ ԵՒՆԴԵՅՈՒՆՆ
Ի ՏՊԵՐԱՆԻ ԱՐՃՈՒՆՆ ԳՐԱԳՈՒՐԱԿՆ

1856 = ԲՅԵ



1850-51

REPORT OF THE

COMMISSIONERS OF THE

LAND OFFICE

FOR THE YEAR

1850-51

ALBANY: PUBLISHED BY

W. B. EWE, AT THE

PRINTING OFFICE



ԵՐԾՈՒԻ

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ

ԱՍՏՒԻ, 1856

ՓԵՏՐՎԱՐ

ԹԻ 9

ԲՆԵՐՅԱԿԱՆ

ՈՂԻ ՓԱՌԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Չիք ինչ չար եւ առաւել պարսաւելի 'ի մտրեկան կիրս մարդկային բարուց քան փառասեր հպարտութեան ախտն . յորմէ յուզեալ սիրտք ամբարհաւաճք՝ բազում անգամ տան մտանալ զչափ մարդկային տկարութեան եւ 'ի վեր քան

զսահման բնութեան հանեալ բարձրացուցանեն . եւ այն չափ յանդգնին այսպիսի ամբարտաւան սիրտք, մինչեւ անդամ մահկանացուք ելով իբրեւ անմահ պարծին եւ պերճանան, հողանիւթ եւ երկրաբարչ մարմնով սողնոց նման 'ի վերայ երկրի

չրջեալք հաւասարք անսանոց ան-
բանից . աւանդ , կարծեն զինքեանս
գոլ հրեշտակ լուսաթեւ վերձեմ
օղք յերկնային գաւառն : Եւ որ
առաւել անտանելի է քան զայս ,
Աստուածամարտ եւս առնեն զա-
նարգ ստեղծուածն՝ հաւասար եւ
զուգապատիւ Աստուծային փա-
ռացն ցուցանելով :

Այս մահառիթ ախտ փառա-
սիրութեան մարդկանց , եմուտ նա-
խապէս յերկինս ՚ի սիրտ լուսա-
պերձ հրեշտակագլուխ արուսեկին
եւ հրապուրեաց դնել զաթոռն իւր
զուգակից Բարձրելոյն եւ նման նմին
պաշտօլ հրաշալի երգովք ՚ի հրեզի-
նաց դասուց Աստուածապէս պա-
տուեալ . որով անդէն կայծակնահար
թօթափեալ յորոտմանէ ամպոց Աս-
տուածասաստ բարկութեան եւ մին-
չեւ յանդունդն սուղեալ կործա-
նեցաւ . ընդ լուսարփի երկնային բը-
նակութեանցն՝ ընկալաւ զտարտա-
րոսին խաւարապատ վայր :

Եւ մուտ ՚ի սիրտ արքային Նա-
բուզոդոնոսրայ եւ զրգոնաց զոգին
մինչդեռ ՚ի վերայ տաճարի թագա-
ւորութեան իւրոյ ձեմէր սիգալով
որ մեծաբանեալ խօսէր . « Ոչ այս
այն մեծ Բաբելոն է , զոր եսն շի-
նեցի ՚ի տուն թագաւորութեան
հաստատութեամբ զօրութեան իմոյ ,
՚ի պատիւ փառաց իմոց » : Այն ինչ
դեռ ՚ի բերանոյն ելանէին այս փրա-
լից ամբարտաւանութեան շունչք ,
ձայն ահալից ՚ի վերուստ հնչէր նը-
մին ՚ի լուր . « Բեզ ասեմ , Նա-
բուզոդոնոսոր արքայ , թագաւորու-
թիւն քո անցեալ է ՚ի քէն . եւ ՚ի
մարդկանէ հալածեցեն զքեզ . եւ

ընդ գազանս անապատի բնակու-
թիւն քո եւ խոտ իբրեւ արջառոյ
ջամբեցեն քեզ » : Այս սպառնա-
լից պատուհաս հասանէր ՚ի վերայ
նորա անդէն եւ եօթնամեայ ժա-
մանակօք ընդ գազանս անապատի
հաւասարեալ . մինչև զիջաւ յիւր
գոռոզութենէն եւ առ ինքն դար-
ձան մտք իւր . ծանեաւ ճշմար-
տութեամբ եթէ ինքն նկուն եւ
անարգ է իբրեւ զանզօր չղջիկան :

Եւ մուտ ՚ի սիրտ Փարաւօնին . որով
յանդգնեցաւ ասել . « Ով է նա ,
որում լուայց ձայնի նորա արձա-
կել զորդինն Խորայէլի . ոչ գիտեմ
ըզ Տէրն եւ զԽորայէլ ոչ արձակեմ :
Այլ ՚ի հարկանիլ տանն հարուա-
ծովք՝ կակղանայր ՚ի խառութենէն
եւ սղերտէր առ ծառայն Աստու-
ծոյ Մովսէս կարձել զանհնարին պա-
տուհանն եւ ելանել շտապով յԵ-
գիպտոսէն : Եւ յորժամ սարջացեալ
դժբէր զուխտ իւր եւ պիղէր ըզ-
հետ Խորայէլեան զօրուն՝ հանդերձ
կառօքն եւ հեծելազօրօքն ընկղմէր
՚ի խորս կարմիր ծովուն եւ ճանա-
չէր անդէն զԱստուածն Խորայ-
էլի :

Եւ մուտ ՚ի սիրտ գեղեցկին Աբի-
սողոմոյ եւ ուսոց նմա դժնդակ
եւ ապաշնորհ մտօք յափշտակել
անիրաւ զգահ թագաւորութեան
Հօրն իւրոյ Դաւթի : Եւ այն ինչ
յոսկեփայլուն հերացն կախեցաւ ՚ի
միջի անտառախիտ ծառոցն՝ ծան-
եաւ թէ արդարակչիս պատիժ էր
այն փառասիրութեան իւրում : Որ
բաձրանալ փափագէր արքայական
չքով ՚ի վերայ հայրենի աթոռոյն ,
անարգաբար ընդ մէջ դատարկ օ-

դոյն կախեալ խոցեցաւ 'ի սիրան . որ աման եւ անօթ լեալ էր ախտից փառամորութեան :

Եմուտ յոգի մեծին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ . որով ամբարտաւանեաց մտօք տիրել միանգամայն չորից ծագաց աշխարհի եւ իշխել ամենայն թագաւորութեանց . որպէս Աստուած տէր է երկնից գաւառին , լիցի եւ Աղէքսանդր տէր ստորին գաւառիս այս : Այլ մինչ 'ի ձեռանէ ծառայից ըմպէր զմահահամբոյր բաժակն եւ նուազիւր յուժոյ աշխարհագրաւ զօրութեան խոնարհէր յոյժ 'ի բարձրութենէ մտացն գիտելով թէ Տէրն՝ ոչ միայն տէր է երկնից . այլ եւ երկրի , որ քաղէ զոգիս իշխանաց ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի :

Թողում սասանոր 'ի մէջ բերել յիշատակութեամբ զբազումս 'ի մարդկանէ . որք հրապուրեալ յախտից փառասէր հպարտութեան բարձրացուցանէին զանձինս Աստուածական իմն փառօք եւ 'ի վեր քան զքնութիւնս իւրեանց ապարժանեալ՝ յանդգնէին զպատիւ միոյ Արարչին յափշտակել :

Յաղագս որոյ խոնարհեցաւ որդին Աստուծոյ յերկնից բարձրութենէն 'ի ստորին վայրս երկրի . զի հեզ անձին օրինակաւ ուսուցէ համօրէն տիեզերաց զընթացս խոնարհական վարուց :

Օղբորոց իմն ցած եւ նուաստիկ կառոյց 'ի սահմանս շրէաստանի . ուր ժողովեալ զաղքատ անտոհմիկ ձկնորս աշակերտս՝ կրթէր զնոսին 'ի վարս հրաշատիպ խոնարհութեան իւրոյ առելով . « Աւարտէք

յինէն , զի հեզ եմ եւ խանարհ սրտիւ եւ գտջիք հանգիստ խնձանց ձերոց :

Օայս՝ Տէրն ոչ բանիւ եւ եթ կրկնելով ուսուցանէր անձանձիր , իւր սիրելի ձեռնասուն աշակերտացն . այլ եւ օրինակաւ խոնարհակերպ անձին իւրոյ տպաւորէր յոգիս նոցա զձեւ պատկերի անօրինակ հեզութեան :

Այլ ինձ զարմանք են աստանոր , թէ որպէս եմուտ այս ախտ փառասիրութեան 'ի Յիսուսեան դպրոցն եւ 'ի սիրոս աղքատիկ ձրկնորսացն այնոցիկ , որոց աչաց յանդիման նկարեալ կայր կենդանի ճշգրտահան պատկեր սիրոյ Վարդապետին անփառասէր վարուցն :

Զիսորդ ոչ պատկառեցան յանկշիռ խոնարհութենէն Յիսուսի զլէճ իմն հակառակութեան յարուցանել 'ի միջի իւրեանց եւ միանգամայն մատչել եւ հարցանել համարձակութեամբ , թէ ո՞ 'ի միջի երկոտասան լիցն համարիցի մեծ : Մինչդեռ Տէրն սրտառուչ բանիւ 'ի ձառարկանէր նոցա զիտակն առ դուրս հասեալ չարչարօնացն . կարծէին նոքա թէ առ ժամն վերջին յայտներոց է թագաւորութիւն նորին : Վասնորոյ աճապարէին յափշտակել 'ի միմեանց զգահակալութեան պատիւն եւ փոխանակ կարեկից լինելոյ յօժարակիր վշտացն խաչասէր Վարդապետին կամ երթալ զհետ նորա 'ի տանջանս եւ 'ի մահ . ո՞վ անգիտութեան նոցին , ճոռացեալ զայս՝ ըզհետ լինէին անօգուտ խնդրոց եւ վիճմանց . որ հակառակ էր յոյժ խոնարհամիտ Աւսուցչին . Որ ցանկ

բաղցրալուր ձայնիւ հեզաբանէր առ նոսա «Ուսարուք յինէն, զի հեղ եմ եւ խոնարհ սրտիւ» : Ո՛վ, չգիտեմ թէ զիւրդ այս ախորժալուր բարբառ խրատու Աստուածային ոչ թափանցէր յունկս նոցա առ ժամայն : Մի թէ ընտրեալքն այնորիկ յաշխարհէ եւ յազդաց, անտոհմիկ աշակերտք Քրիստոսի խցին զականջս իւրեանց նման դպրաց եւ փարիսեցւոց չառնուլ զդեղ յինսստուն եւ 'ի ճարտար Բժշկէն : Քաւ, ոչ այսպէս, այլ հեշտաբար ունկն մատուցանէին բանից սիրախօս վարդապետին իւրեանց : Բայց քանզի դեռ տղայաբարոյ էին չեւարբեալ զհրաշքաժակ Հոգւոյն շրնորհագ զբուարթացուցիչ գինին :

Վասն որոյ իբրեւ գեղջուկ ախմարք եւ տխմարք ոչ կարէին լիութիւն հասու լինել խոնարհ թագաւորութեան Քրիստոսի . այլ կարծէին եթէ Տէրն իւրեանց յանկարծ յայտնելոց է հզօր եւ մշտնջենաւոր թագաւորութեամբն իւրով եւ նստելոց է յաթոռն Դաւթի ցյաւխտեան . որով եւ ինքեանք յայնժամ 'ի ձկնորսական նուաստարուեստ վիճակէն վերացեալ փառօք բարձրանալոց են 'ի զանազան պատիւ նախարարութեան :

Ուստի 'ի շինական պարզամտութիւնս նոցին՝ տեղի դտանէր ոգի աշխարհային փառասիրութեան . յորմէ յուզեալք խուճապէին յառաջել քան զմիմեանս եւ լինել դահակալ 'ի տեղի Քրիստոսի եւ կամ յաջմէ եւ 'ի ձախմէ աթոռակից նմին բազմիւ իբրեւ արժանիք այնպիսում փառաց եւ պատուասիրութեան

զինքեանս վարկանելով : Աւստի զեղանակ վիճարանութեան նոցին նըկարագրեմք աստանօր թէ զիւրդ իւրաքանչիւրքն 'ինոցանէ սեպհական իմն ձրիւք առ ընկերաւն պարծեցեալ թեւակոխէին իշխանական ճոխութեամբ մեծ համարիլ :

ՏՐԸՍԱԿՈՍՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԵԱՆ
ՀԱԶԱՐԱՊԵՏԱՅՆ ԲՐԻՍՏՈՍԻ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ՊԵՏՐՈՍ . Մաւրիկ եղբարք, Տէր եւ Վարդապետն մեր հանդերձեալ է հրաժարիլ 'ի մէնջ . արդ մատուցեալ հարցուք, թէ Ե՛լ 'ի միջի երկոտասան աշակերտացս համարիցի մեծ եւ 'ի տեղի Տեառն մերոյ կացցէ փոխանորդ եւ մրանգամայն ինքն իշխան կառավար 'ի վերայ նորահիմն եկեղեցւոյ իւրում . զոր նախալձիռ դաւանութեամբ խնով շինել կամեցաւ 'ի վերայ վիմական անուանս . Թուի ինձ, եղբարք, եթէ այս իրաւունք ինձ միայնոյ տալոց է Տէրն . քանզի յառաջեալ քան զձեզ դաւանեցի զնա գոլ ճշմարիտ Որդի Աստուծոյ կենդանոյ : Որով արժանի եղէ իսկ յԱստուածային բերանոյ անտի զերանութիւն ընդունել եւ իբրեւ վէմ հաստատութեան դընիլ 'ի հիմունս եկեղեցւոյ եւ 'ի դրանց դժոխոց անյաղթելի մնալ : Որ խոստացաւ 'ի ձեռն նախադուշակ մարդարէից դնել 'ի սիօն վէմ ըն-

տիր եւ պատուական. նոյն 'ի վե-
րուտ անտի յայտնեաց ինձ դա-
ւանութեամբ քարոզել զվէմն այն
որդի Աստուծոյ. որով տիրապէս ժա-
ռանգորդ գայ մեծի շնորհաց եւ
'ի վերայ նախկին անուանս վայելչա-
պէս կրեցի զվիմական անուն :

Արդ ո՞րք 'ի ձէնջ համարձա-
կիցի յափշտակել յանիրաւի զայս
տիրապարգեւ շնորհ յինէն եւ հա-
կառակ Բրիտոսի վճառոյն՝ զանձն
յառաջ մատուցեալ մեծ լինել ժը-
պրհիցի : Ո՞րք 'ի ծառայից ձեռնե-
րէց լիցի դրաւել 'ի ծառայակցէն
զիշխանական պատուոյ նշանն . որ 'ի
Տեառնէն պարգեւեալ իցէ . ո՞րք
'ի զօրապետաց առանց քաջամար-
տիկ նահատակութեան կարիցէ կը-
րել 'ի վերայ կրճոց պարծանօք ըզ-
պատկեր արքայական անուան . ո՞րք
ինքնարգոյ մտօք անձնահաճ՝ լեալ
ընդ վզեցի ինքնին բարձրանալ 'ի
պատիւ իշխանութեան առանց հը-
րամանի Թագաւորին :

Հապա, եղբարք, մեք, որ զինուոր
եմք Բրիտոսի Թագաւորութեան .
մի որք 'ի ձէնջ առանց քաջագոր-
ծութեան մատուցեալ առաջի հան-
դիսագրին պատիւ իշխանութեան
պահանջիցէ : Դուք ամենեքին վը-
կայ էք իսկ . եթէ զայս մատանին
իշխանութեան ոչ ձրի ընկալայ ես
'ի ձեռանէ Բրիտոսի Տեառն մերոյ,
այլ վսան քաջահաւատ դաւանու-
թեանս : Ուստի ամենեցուն ձեզ
պարտ է հնազանդ լինել այսմ տի-
րատուր իշխանութեանս եւ աննա-
խանձաբար մեծ համարել զիս 'ի
միջի ձերում : Մանաւանդ որ հա-
սակաւ եւ ալեօք ծերագոյն եմ

քան զձեզ եւ միշտ նախադաս ան-
ուամբ պատուեալ յաւետարանի
անդ եւ բազմիցս իբրեւ հաւատա-
րիմ եւ ժիր պաշտօնատար զհրաման
Բրիտոսի միայնակ կատարեցի :
Ուրեմն դուք իբրեւ հօր պարտիք որ-
դիաբար պատկառ կալ ինձ եւ պատ-
րաստ լինել առ ամենայն ակնար-
կութիւն հրամանի մերում . զոր
տնօրինել ունիմք 'ի անտեսութեան
աւետարանին :

ԱՆԴՐԷԱՍ . Ինձ յաւէտ քան
զքեզ, Պետրէ հարազատ եղբայրդ
իմ պարտ եւ պատշաճ է նախամե-
ծար իշխանութեամբ պատուիլ .
քանզի յառաջ քան զամենեսեսանդ
նախակոչ հրաւիրանօք արժանի ե-
զէ գրիլ առաքեալ Բրիտոսի եւ
գտանել զՄեսիայն յեզերս Յորդա-
նանու . առ որ ամար շնորհիւ միջ-
նորդութեան իմոյ եւ արժանի եզեր
փոփոխման նախկին անուանդ : Ուս-
տի անդրանիկ եմ ես 'ի մէջ եղ-
բայցդ . որով եւ իրաւամբք ժա-
ռանգորդ մեծութեան : Աչ դու ,
Պետրէ , եւ ոչ այլ որ յաշակեր-
տացդ ունիք իրաւունս զիմ անդ-
րանկութեան պատիւ յափշտակել
յինէն : Մի թէ եւ ես անմիտ իցեմ
արդեօք իբրու զԵսաւն այն . որ
չգիտիցեմ զյարգ նախածին անդ-
րանկութեանս 'ի Բրիտոսս եւ 'ի
բաց լինիցիմ իշխանական ժառան-
գութենէն , եւ դուք կրսեր եղբարք
գորով . որպէս կարէք գրաւել յի-
նէն զկրկնակի մասն հայրենի ժա-
ռանգութեան իմոյ :

ՅՈՒՀԱՆՆԷՍ . Որ սիրելի մը-
տերիմ է Թագաւորին , նմա իսկ ար-
ժան է իշխանական ճիսութեամբ

պատուիլ 'ի նմանէ, ուլ որ 'ի ձէնջ իբրեւ զիս սիրելի է Քրիստոսի Թագաւորին, ուլ 'ի ձէնջ համարձակեցաւ 'ի տրամալից յերեկուն մինչ յընթրիս բազմեալ երկնաւոր Վարդապետն մեր խօսէր զապաշնորհ մատնիչ աշակերտէն, փարիլ զԱտուածային լանջօքն եւ հարցանել մտերմաբար, Տէր, ուլ է, որ մատնելոց է զքեզ :

Թողում գայս, ուլ 'ի ձէնջ իբր զիս անձնադիր բարեկամ գտաւ Յիսուսի մինչեւ 'ի խաչ : Դուք 'ի գիշերին մատնութեան այն ինչ կապեցաւ Տէրն մեր եւ հարաւ հովիւն երկնաւոր, Թողիք զնա 'ի ձեռս գայլոց եւ աճապարեցիք 'ի փախուստ : Վարժողդ այդ Պետրոս եկն միայն ընդիս մինչ 'ի գաւիթ քահանայապետին եւ անդ 'ի ստիպել տկար աղջկան միոյ, սասանեալ շարժեցաւ 'ի վիմական զօրութենէն եւ երկոց ուրացաւ զՏէրն : Այլ ես աներկիւղ ընթացայ զհետ նորին եւ առ խաչին հանդէպ կացեալ վշտակից եղէ նմին ընդ սիրայնոյ մօրն Մարիամն :

Վ ասն որոյ առիս եւ եթ խօսեցաւ Տէրն 'ի խաչէ անտի եւ ինձ միայնոյ յանձնեաց զնազելի Մայրն իւր լինել նմին պաշտպան յաշխարհի աստ եւ 'ի տեղի իւր կալ որդեգիր Վուսին : Եւ 'ի վերայ այսր ամենայնի ես եւ եղբայրն իմ Յակոբոս հանդերձ մարք մերով մատուցեալ խնդրեցաք 'ի Յիսուսէն. զի նստիցուք յաջմէ եւ 'ի ձախմէ նորին յարքայութեան. եւ խոստացաք եւս կամակար յօժարութեամբ ըմպել զբաժակն չարչարանաց : Հա-

պա արժանի է իսկ մեզ նախաթաւ բազմիլ 'ի միջի երկոստասն աշակերտացդ :

ՅԱԿՈԲ Տեառնեղբայր . Այս են զարմանք. որպէս մէն մի 'ի ձէնջ ճարտար փաստաբանութեամբ ջանայ զիրաւունս իւր հաստատել եւ որ անթխտելի իրաւունս ունիմ 'ի ձեռին իմում, լբեալ կամ առաջի ձեր ափիբերան :

Հարցանեմք 'ի ձէնջ, եղբայրք, ո՞յք են օրինաւոր ժառանգք եւ յաջորդք հայրենի իշխանութեան. որդիք, եղբայրք, եւ ազգականք, որք առաւել մերձաւորք են, եթէ օտարք եւ հեռաւորք : Ո՛չ ապաքէն դուք ամենեքին յանտոհ միկ եւ 'ի շինական տանէ իբրեւ օտար եկեալ յարեցաք 'ի վարդապետն Յիսուս. եւ արդ ճգնիք զօրաւոր բանիւք յառաջ վարել զդասն ձեր : Գիտա՞ղիք, եղբայրք, այդ իրաւունք եւ պարծանք իշխանութեան, մեզ միայնոյ են. որ եմք իբրեւ դայեկատոհմք սննդակից եղբայրք, եւ ազգականք եւ բարեկամք եւ մերձաւորք եւ ընտանիք Քրիստոսի : Իզուր եւ տարապարտ է վիճելն ձեր ընդ միմեանս, յորժամ առ ընթեր մերձ կայցէ ընտանի ազգականն, եւ զի՞նչ իրաւունք իցէ օտարախորթիցդ ժառանգորդ լինել պատուոյ եւ իշխանութեան. եւ հարազատիցս՝ զբիւլ յայդախում չընորհէ :

ՄԱՏԹԷՈՍ Մաքսաւոր . Մեծ իմաստութիւն պիտոյ է, որ ցանկայ մեծութեամբ իշխել 'ի վերայ ամենեցուն, չգիտեմ, եղբայրք, ի՞նչ այդպէս պերճանալ կամիք 'ի վերայ մի-

մեանց : Դուք ամենեքին տխմարք եւ պարզամիտք եւ շինականք 'ի ձրկնորսական արուեստէ յառաջ եւ կեալք . ոչ գիտելով զչափ անձին ձերոյ այդպիսում պատուոյ զձեզ արժանի համարիք :

Եթէ արդարեւ կառավարու թիւն թագաւորութեան Բրիտանիիցէ ըստ աշխարհային կարգաց, որպէս դուքդ կարծէք, ինձ յաւետ վայել է սոյդ գահ իշխանութեան . որ 'ի մանկութենէ անտի բարեոք կրթեալ եմ 'ի բաղաբական կրողութիւնս արուեստիւք մաքսաւորութեան եւ յարգ համբաւոյս իմոյ, երեւելի է յոյժ 'ի մեծի բաղաբիս Երուսաղէմի . թէ եւ անարգեալ 'ի դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց : Մանաւանդ յորժամ օգնական եւ սատար առից ինձ զՅուդա Իսկարիովտացի, կարգելով զնա գանձապիտ եւ հետեղանաւոր . գիտեմ հաւաստեալ, թէ յայնժամ եւս բարեոք կարեմ կառավարել զայդ պաշտօն մեծութեան :

Ուրեմն դադարեցէք դուք յանձնապանձ վիճարանութենէ այսի եւ ծաներուք իմաստութեամբ ըզչափ տկարութեան անձին ձերոյ եւ մի անխորհրդաբար ձկտիք 'ի պատիւ բարձրութեան հասանել :

ՊԵՏՐՈՍ . Այդպէս իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զոգի ապստամբութեան յանձն իւր բերեալ, ոչ կամիք սրտի մտօք հպատակիլ Բրիտանոսկարդ իշխանութեանս : Ես ոչ իբրեւ ըզձեզ հաստատել կամիմ զիժ իշխանութիւն պատիր ճարտարամտութեամբ բանից . այլ Բրիտանոսի պարզախօս վճռով . որ ինձ միայնոյ խոս-

տացաւ փականս երկինց արքայութեան . ինձ եւ եթ հրամայեաց արածել զոչխարս եւ զգառինս իւր . ես իբրեւ հաւատարիմ տնտես . 'ի Տեառնէ կացի 'ի վերայ գերդաստանի եկեղեցւոյ տալ 'ի ժամու ըզկերակուր . ես իբրու կարի յառաջադէմ եւ ժիր պաշտօնատար չոգայ 'ի ծովս եւ որսացեալ զձուկն հանի 'ի բերանոյն զսափերն արծաթոյ եւ բերեալ ետու հարկս ընդ Տեառն եւ իմ . ես իբրեւ գլուխ բազմեալ յատենի առաջարկեցի ձեզ վիճակս արկանել եւ ընտրել զմի ոմն փոխան յուզայի մատնիչ աշակերտին . ես յաւուր պենտեկոստէին այն ինչ արբի զհրաբաժակ հոգւոյն՝ զօրացայ առաւել քան զձեզ եւ յարուցեալ աներկիւղ 'ի բազմամիտիս ատենին նորահրաշ լեզուաւ խօսեցայ զգալտենէ Հոգւոյն յաշխարհ եւ 'ի բարբառոյ աստի իմմէ յորդորեալ հաւատացին անձինք երեք հազար եւ յաւելան 'ի թիւ աշակերտաց :

Թողում յիշատակել աստանօր եւ զայլ յառաջադիմութիւն գործոց իմոց . որովք առաւելում քան զձեզ եւ հաւաստի ապացոյց են նորին գերագոյն իշխանութեանս, զոր ունիմ 'ի Բրիտանոսէ կալ 'ի վերայ ձեր իբրեւ գլուխ եւ իշխան հրամանատար :

Փակեալ են երկինք ընդդէմ այնոցիկ եթէ ոչ բանալեալ իշխանութեան իմոյ բացցին . ոչ կարէ կալ հաստատուն շինուած եկեղեցւոյն խայնիկ, եթէ ոչ 'ի վերայ վիմիս հաւատոյ անշարժ կառուցի :

Դուք եւս թէպէտ քարոզու-

Թեամբ բանից շինող էք Քրիստոսի եկեղեցւոյն . սակայն 'ի ձեռին իմ է միայն լար ուղիղ հաւատոյ ճարտարապետութեան : Թիւր եւ անհաստատ է շինուածն . եթէ ոչ չափեացի լարիւ իշխանութեան իմոյ . 'ի հողմոց եւ հեղեղաց բաղխեալ կործանի . եթէ ոչ միացի . եւ պնդեցի յանվանդ վէմն որ անվանելի է 'ի դրանց դժոխոց : Ասպ եմ ես միացուցիչ անդամոց Քրիստոսական եկեղեցւոյն . որ յամենայն ազգս եւ 'ի լեզուս ցրուեալ են . եթէ ոք խրդեալ զայս կապ իշխանութեան ոչ պարաւանդեցի հլու հնազանդութեամբ՝ բաժանեալ է նա 'ի միութենէ եկեղեցւոյն :

Եթէ եկեղեցին իբրեւ անդամ յօղեալ եւ պատշաճեալ է 'ի գլուխն Քրիստոս եւ սքանչելի խորհրդով 'ի մի մարմին միաւորեալ Արդ որպէս հնար իցէ մարմնոյն առանց գլխոյ լինել . որովհետեւ ճրչմարիտ գլուխն Քրիստոս չեկաց յաշխարհի առ 'ի կառավարել զեկեղեցի իւր օրական եւ աստուածային իշխանութեամբն եւ իբրեւ զօրագլուխ զնուորեալ հաւատացելոցն՝ համախմբել զնոսին 'ի պատերազմ ընդդէմ թշնամեաց : Ասնորոյ զիս փոխանակ իւր , Տէրն մեր գլուխ եղ մարմնոյ եկեղեցւոյն . զի կառավարեցից զանդամն նորին մշտապէս կացեալ յաշխարհի աստ : Թէպէտ եւ ես թողեալ զեկեղեցին ելանելոց եմ յերկինս . այլ սակայն Տիրական իշխանութիւն իմ կայ յեկեղեցւոյ եւ կենդանի եմ ես 'ի յաջորդս իմ . ցորչափ կայ եկեղեցին հարկաւ պարտ է . զի եւ գլուխն նո-

րին կայցէ 'ի նմա :

Իսկ դուք , նա եւ ամենայն յաջորդք ձեր եթէ ոչ հնազանդեալիք այսմ կանոնի՝ չունիք մասն ճշմարիտ անդամ լինել Քրիստոսական եկեղեցւոյն . եւ զուրկ մնայք 'ի հաղորդութենէ կենդանի գլխոյն . վասնզի մեռեալ համարին անդամք , մեռեալ է եւ այն մարմին եթէ չունիցի զկենդանի գլուխն 'ի վերայ իւր : Մի միայն է հօտն հաւատացելոց ըստ Քրիստոսի բանին եւ մի է հովիւ եւ արածող նորին : Ար այս իսկ յայտնի է . զի յետ յարութեան ինձ միայնոց հրամայեաց արածել զգլխարս նորին , այս է զամբողջ հօտ հաւատացելոց :

Հասա , եղբարք , դուք իւրաքանչիւրք եթէ ոչ յօժարեալիք մուծանել զգլխարս ձեր ընդ մեծ դուռն եւ լայնատարած գաւիթն Հռովմայ . ամէն ամէն ասեմ ձեզ , դուք եւ ոչխարք ձեր մատնիք 'ի ձեռս գողոց եւ յափշտակեալ ցրուիք 'ի գայլոց :

Աւստիկ զեկուցի այսչափ զիրաւունս իշխանութեան իմոյ . որում եթէ անայցէք , բարեղք առնէք . իսկ եթէ ոչ , անպարտ եմ ես այսուհետեւ յարենէ ձերում եւ ոչ պահանջէ յինէն Տէրն զհամար տրնտեսութեան որ վասն ձեր . եւ ոչ ես առեալ զձեզ ասացից առ Տէր յաւուր գալստեան նորին . Թէ ահա ես եւ մանկուիք իմ :

ՊՕՂԱՍ . Եղբարք իմ , յանդնութիւն է ինձ խօսիլ առաջի մեծ հազարապետացոյ Աստուծոյ . որ ընտրեալքդ էք 'ի Քրիստոս եւ ցանկ ընդ նմին շրջեալ եւ յԱստ-

ուածային ածոյ անտի օրհնեալք եւ ձեռնադրեալք : Մակայն իբրեւ միջնորդ համարձակեալ խօսիմ ընդ ձեզ զբանս սիրոյ եւ խաղաղութեան եւ մանաւանդ ես որ տրուպս եմ առաքելոցդ , ոչ յանդղնութիւն համարիմ աստ . եթէ իրաւամբք ճշմարտութեան յանդիմանեցից զձեր իւրաքանչիւրոցդ փառասիրութեան ախտ . որով դուցէ բժշկեալ 'ի հիւանդութենէ հպարտութեան , ընդ առողջութիւն խոնարհութեան զիջանիցիք :

Օ արմանամ , Պետրէ , ընդ զօրաւոր բանս բոյնն , թէ որպէս ճարտար փաստաբանութեամբդ յաղթել կամիս եղբարցդ եւ զիւրաքանչիւրոցն իրաւունս առ բեզ դարձուցանել . եւ զոր ունիադ չբաւականացեալ այնու՝ զընկերին եւս հանել կամիս , զրկելով զնա 'ի հայրենի ժառանգութենէն :

Ար վէմ անուանեալդ ես 'ի Քրիստոսէ յաղադս ճշմարիտ եւ հաստատուն դաւանութեանդ . դու զի՞ ջանաս եւ նկրտիս զՔրիստոսի բուն վիմին զօրութիւն յանձինդ գրաւել եւ զընկանուսն ախտութիւնրդ առիթ առեալքեզ՝ համարձակիս միապետ իշխան եւ դատաւոր նստել յեկեղեցւոյ փոխան Քրիստոսի : Գլխեմ սարկօք թէ զի՞նչ է վէմն եւ զի՞նչ զօրութիւն նորա , բանի՞ շնորհ եւ որպիսի կենդանութիւն . որչափ է մեծութիւն եւ որքան անդրուելի հաստատութիւն :

Մի թէ նիւթեղէն արձան իցէ վէմս այս , կամ մարմին շիշաւոր . քան , այլ նոր իմն վէմ գերահրաշ Լստուածային խմատութիւն ան-

հաս 'ի մարդկային մտաց : Հապա զի՞ պարծիս դու , Պետրէ , միթէ առ 'ի վերայ ստոյդ դաւանութեանդ զվիմական անունդ 'ի քեզ կրելով կարծես եւ զյատկութիւն բազմապատիկ շնորհաց ճշմարիտ վիմին 'ի քեզ դարձուցանել : Եթէ այսպէս իցէ , աղէ դու 'ի բարձու դահէն Հռովմայ հատեալ 'ի վայր եւ գրութելով յընդհանուր յաշխարհ , հար եւ կործանեա զպատկեր կապաշտութեան . որպէս եւ վէմն Քրիստոս ըստ տեսչեան Դանիէլի հատեալ առանց ձեռին 'ի կուսական լեռնէն տապալեաց զկանդնեալ պատկեր չարին : Եթէ վէմ ես վճտակահոս , աղէ ընթացիր զհետնոր իսրայէլեան բանակին առ ամենայն աշխարհ եւ արքո զծարաւեալս , որպէս վէմն հոգեւոր ինքն Քրիստոս երթայր զհետ բանակին հնոյն իսրայէլի եւ առատահոս ջրով կենդանութեան զովացուցանէր զպաքեալս :

Իսկ եթէ առ այս անկարող ես յուշ 'ի քեզ բեր , ծանկիր զտկարութիւն մարդկային բնութեանդ եւ մի կարծեր եթէ իբօք վէմ ես դու եկեղեցւոյ կամ 'ի վերայ քո շնեալէ եկեղեցին . ոչ , այլ 'ի վերայ ճշմարիտ դաւանութեանդ . զոր պաշտօնեայք աւտարանին բարձին յուս իւրեանց իբրու զքարինո 'ի դետոյն Յորդանանու եւ առ ամենայն աշխարհ տարեալ եղին 'ի հիմուն եկեղեցւոյ , քարոցելով նոյնն զգալուստ որդւոյն Լստուծոյ :

Եւս իսկ են ինձ զարմախք , զի յետ վէմ դնելոյ զքեզ ամենայն եկեղեցեաց՝ գլուխ եւս կոչես զքեզ

բովանդակ անդամոց եւ միոյ մարմնոյ եկեղեցւոյն . որպէս թէ գլուխն Քրիստոս յերկինս գորով բաժանեալ իցէ 'ի մարմնոյ եւ յանդամոց եւ կեղեցւոյ իւրում : Ուստի անհրաժեշտ հարկ է երեւելի գլուխ իմն եւ կեղեցւոյ նորին եւ զքեզ միայն արժանի համարիս գլուխ լինել եւ կառավարել զեկեղեցի նորին :

Եթէ այսպէս իցէ , թողութիւն արասջիր ինձ , եղբայր , Քանզի 'ի թուղթս իմ բազում ուրեք գրեցի անխորհրդաբար . « Առն ամենայնի գլուխ Քրիստոս է . ջնա եղ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք , Նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ . եւ եթէ Հայեցարուք 'ի զօրագլուխն հաւատոյ » : Աւանդ , մոլորեցայ , Պետրէ , արա զիս խելամուտ , զի պարտ էր ինձ այսպէս գրել » . Հայեցարուք յաներեւոյթ գլուխն Քրիստոս եւ յերեւելի գլուխն Պետրոս . յորոց մինն նախ յերկինս անտեսաբար եւ միւսն 'ի Հռովմ իբր տեսանելի գող ընդ հանուր ծագաց աշխարհի :

Ո՞վ մեծի զօրութեանդ եւ սուր աչացդ , Պետրէ , ամենատեսն ակն որ յերկնից բարձանց զանդուռնդս նկատէ , եւ որ պահէր զխորայել անքուն . իբր թէ անկարող իցէ յանբաւ հեռաւորութենէն երկնից տեսանել զեկեղեցին իւր հսկել եւ կառավարել զնա . դու չգիտեմ , որպէս կարող ես 'ի ծագաց Հռովմայ զԱթովպիա տեսանել , կամ արածել զղջխարս կամ կոչել 'ի յազն երկնաւոր , աւ որ չզօրեն ժամանել ձայն փողոյ բարոզութեանդ եւ ոչ իսկ զօրութիւն իշխանութեան հովուա-

կան գաւազանիդ :

Օ ի՞նչ կարծես , մի թէ նոր իսրայէլեանս բազմազգի աշխարհախումբ բանակ իբրեւ Հնոյն Իսրայէլի փոքրիկ եւ սակաւաթիւ իցէ . զի 'ի ձեռն միոյ առաջնորդին Մովսիսի հասանել կարիցէ յերկիրն . Աւետեաց . ո՞չ , անչափ է մեծութիւն նորոյ բանակիս , որում պիտոյ է նորումն եւս հրաշալի Մովսէս , որ է Տէրն Քրիստոս եւ առաջի երթայ բանակիս լուսատեսի սիւն ամպեղէն Աստուածային Հոգւոյն առաջնորդութեան , որ անխոտոր եւ անստերիւր շաւղօք առաջնորդէ ոչ յերկիրն . Աւետեաց , այլ յիմանալի գաւառն երկիրն կենդանեաց :

Օ որ առ Արնթացիս երբեմն գրեցի խրատելով . զնոյն եւ արդ առ քեզ կշտամբելով խօսիմ . ո՞վ ես դու , Պեփաս , ո՞վ է կամ Ապօղոս . ո՞չ ապաքէն խոնարհ պաշտօնեայք Քրիստոսի Աւետարանին եւ հազարապետք խորհրդոցն Աստուծոյ : Ո՞վ , քանի՞ ապստամբութիւն է առաջի Աստուծոյ , եղբայր , յորժամ դոյն օրինակ մեծամտեալ պանծամք 'ի վերայ իրերաց , որով 'ի դադաստանս սատանայի մատնիմք : Մեք որ ծառայ եւ մշակ եմք Քրիստոսի նորատունկ պարտիզին եւ ոռօգիչ հաւատացեալ բանեղէն բուսոց ջրով Աւետարանին քարոզութեան . զի արդ կարիցեմք պարծիլ յաղազրս աճման բուսոցն . ո՞չ ապաքէն Աստուած է , որ աճեցուցանէ : Ընդունայն են պարծանք մեր , եղբայր , զի մեք իբրու խեցեղէն աման կըրեմք զզօրութիւն շնորհաց Աւետարանին 'ի մեզ : Ուստի ոչ դու

ինչ ես եւ ոչ ես եւ այլ որ , այլ մի-
այն Աստուած , որ Քրիստոսիւ զա-
մենայն առնէ :

Արամուծիւն իմ , Պետրէ , ա-
ռաւել շարժի եւ զայրանամ յոյժ
'ի վերայ անիրաւ գրկանացդ . որով
բռնացեալ 'ի վերայ եղբարցդ զրկել
եւ յափշտակել կամիս զսեփհական
զինչս նոցին . կամիս գրաւել զայ-
դին , յոր ոչ վաստակեցեր անկերով
եւ մշակելով ունն . կամիս զման-
կաղ իշխանութեանդ արկանել 'ի
յանդատանս եւ 'ի հունձս այլոց .
զոր ոչ վարեցեր կամ ցանեցեր քրո-
տամբք երեսաց , կամիս հայր լինել
որդւոց . զորս ոչ ծնար 'ի Քրիստոս
Յիսուս . Աւետարանին քարոզու-
թեամբ : Որով իրաւամբ հայր լի-
նել կամիս եկեղեցւոյն հեթանոսաց
կամ մանաւանդ Սորնթացւոց . առ
որ գրեցի խանդաղատակիւ բանիւք .
«Թէ եւ բիւր դաստիարակս ունիցիք
'ի Քրիստոս Յիսուս . այլ ոչ բազում
հարս , զի 'ի Քրիստոս Յիսուս ես
ծնայ զձեզ » :

Աւանդ խտտագոյն սրտիդ , եղ-
բայր , սրբէս ոչ խղճիս եւ չամաչես
երբէք մայր լինել զաւակաց . յորոց
բերանն ոչ մատուցեր դու գկաթն
բանին կամ գգուեալ սնուցեր դու
բովալից գթով :

Օ ի՞ է , զի՞ միայնակ դու գրաւ-
եալ զձեռովմ բազմիս յաթոռ բարձ-
րութեան . ոչ ապաքէն առաւել բան
զքեզ վաստակեալ եմ անտանօր 'ի
վիշտս 'ի նեղութիւնս 'ի գանս եւ
հարուածս եւ բազմապատիկ ստա-
ցեալ զպտուղ հաւատացելոց եւ
դու ըստ Տեառն բանին 'ի վերջին
պահու եկեալ մտեր 'ի պատրաստ-

եալ վաստակս իմ : Բայց արդ , ո՞հ ,
դու աէր , ես պաշտօնեայ , Պետրոս
պատուեալ . եւ Պօղոս անարդեալ .
Պետրոս բազմեալ յաթոռ վերամ-
բարձ . Պօղոս յատին կացեալ . Պե-
րոս հրամայէ . Պօղոս լռեալ կայ .
Պետրոս փառօք յաւէտ յիշատակ-
եալ . Պօղոս յեանեալ եւ մուացեալ
'ի միջի Հռովմայ :

Եւր երկինք , եւ լուր , Տէր ար-
դար եւ ճշմարիտ , առ քեզ բողոք
արկանեմ . դու որ սիրես զարդա-
րութիւն եւ առնես իրաւունս զըր-
կելոց . դու որ հրամայեցեր բա-
րի եւ հաւատարիմ ծառային՝ իշխա-
նութիւն ունիլ 'ի վերայ տան քա-
ղաքաց . յաղագս մեծավաստակ ա-
ռաքինութեան . որ զտաղանդ շնոր-
հաց բանիդ բազմապատիկ արկ 'ի
սեղանաւորս յոգիս հաւատացելոց
եւ կրկնապատիկ եցոյց քեզ շահ 'ի
լրումն գանձարանիդ արքայու-
թեան :

Արդ մի թէ Պօղոս նման վատ
ծառային թագոյց երբէք զտաղանդ
բանիդ . մի թէ Պօղոս քան զժա-
ռայակից ընկերան եւ քան զՊետրոսն
եւս , ո՞չ տասնապատիկ շահեցաւ
քեզ գանձ եւ ժողովուրդ նոր . հա-
պա ո՞ւր է արիտուր վաստակոց ի-
մոց , Տէր , ընդէր ոչ կշռես զվարձս
իմ արդարութեամբ եւ ոչ հրամայ-
ես ինձ իշխանութիւն ունիլ 'ի վե-
րայ տան քաղաքաց :

Դարձեալ առ քեզ խօսիմ , լուր ,
Պետրէ , զի՞նչ արդիւնս առաւել
քան զիս ցուցեալ ես . դու 'ի
անտեսութեան Աւետարանին . կամ
էր վասն պարծիս 'ի վերայ եզակի
անուանդ : Դու վէմ կոչեցար Աս-

տուածային բերանոց անախ. ես ա-
նօթ ընտրութեան, կրելով զանուան
Յիսուսի 'ի մէջ հեթանոսաց. դու
յաշխարհի աստ ընտանի եղեր
Քրիստոսի ընդ նմին ցանկ շրջելով
եւ 'ի լեռան Թափօրական արժանի
եղեր տեսանել զանպարագիր լոյսն
'ի մարմնի արտափայլեալ. այլ ես
յափշտակեալ մինչեւ ցերրորդ յեր-
կինս հուպ Երրորդութեան 'ի լեռան
իմանալի տեսի զանպատուան եւ լը-
ուայ զբանս անձառ. դու 'ի վեր-
նատուն ընկալար ընդ դասս առա-
քելոց զչորդին Տեառն. ես առ ճա-
նապարհաւ Դամասկոսի. որով այն
չափ լոյս լիացայ եւ զօրացայ, մին-
չեւ անդէն 'ի Դամասկոս համարձա-
կեցայ խօսել զբան Տեառն. դու շը-
րէից առաքեալ եւ ես համօրէն հե-
թանոսաց. դու տրովք հաւատացե-
լոց կերակրեալ. այլ իմ վրանակար
արուեստիւք զպէտս հոգացեալ ձրի
քարոզեցի զԱւետարանն:

Աւրեմն, եղբայր, եթէ չիցեն ար-
դիւնք իմ առաւել քան զքոյդ,
կարծեմ եւ ոչ նուազ. այլ համա-
հաւասար լծորդակից եղէ քեզ միշտ
'ի պաշտօն Աւետարանին. ամոլակիցք
զուգընթաց գտաք միմեանց իբրու
զեզինս հերկելով պատառելով զան-
հաւատութիւն ապառաժ սրտից եւ
ցանկելով 'ի նմա զսերմն բանին:
Հապա էր վասն մեծամտեալ վերա-
դաս առնել զքեզ կամիս. որով իբ-
րեւ քար գայթաղութեան եւ ա-
ռիթ խռովութեան լինիս. 'ի միջի
եղբարցդ. յորմէ շարժեալք եւ նո-
քին 'ի կրկն փառասիրութեան՝ պար-
ծի մեծաբանութեամբ իւրաքանչ-
իւր ոք զիրաւունս աւագութեան

'ի ձեռս բերել մեծ եւ իշխան հա-
մարիլ 'ի վերայ եղբարց հակառակ
Քրիստոսի անստեղի վճռոյն:

Այլ բանք իմ լուեցեն աստա-
նօր, լուեցէք եւ դուք, եղբարք,
խօսեացի նա, որ Տէրն է միայն իշ-
խանութեանց եւ իրաւանց. որ տըն-
տես եւ հազարապետս կացոց զմեզ
տան իւրոյ որ է Եկեղեցի:

ՅԻՍՈՒՍ. Արպիսի՞ յանդիմա-
նական բանիւք կշտամբեցից զձեր
աղայյամտութիւն, եղ աշակերտք իմ,
զի՞նչ այդ, ընդէր անմտաբար վի-
ճէք ընդ միմեանս: Մի թէ ոչ ազ-
դեաց ձեզ Ատուածային եւ ան-
դանձ վճիռ բանից իմոց. եթէ որ
կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի
կրտսեր, ծառայ եւ սպասաւոր:

Ըւանգ, տակաւին ոչ ուսայք
հեղութիւն, տակաւին աղայաբարոյ
մտօք տատանիք. մուսցանք արդ-
եօք զպատկեր խոնարհ մանկան.
զոր կացուցի առաջի ձեր. մի թէ
պակասեցան մանկունք յաշխարհէ
եւ չերեւին երբէք առաջի աչաց
ձերոց: Արդ փոխանակ լինելոյ ձեզ
մանկտի, բարոյիւք հեղ, մտօք խո-
նարհ, ողուով աղքատ, աղանի
միամիտ. դառն հանդարտ. ո՛հ,
ընդ հակառակն մեծամտեալ հպար-
տանայք 'ի վերայ միմեանց. եւ
թողեալ զդպրութիւն ուսման Աստ-
ուածախօս վարդապետութեան ի-
մոյ՝ այլու՞մ դպրոցի աշակերտիք:

()ն առեալ տարայց զձեզ
միւսանդամ 'ի դպրոցն խոնարհու-
թեան 'ի վերնատունն սուրբ. ուր
յրնթրիս բազմեալ բացից զմատեան
սիրոյ վարդապետիս, կրկնեցից ըզ-
միակ պատուէրն իմ յականջս ձեր:

“ Այս է պատուէրն իմ զի սիրեալիք զվիմեանս . Յայսմ գիտացեն ամենեքեան , եթէ իմ աշակերտք էք , եթէ սիրեցէք զվիմեանս » :

Օտիպ ծայրագոյն խոնարհութեան իմոյ ոչ բանիւ եւ եթ նկարեցի 'ի միտս ձեր . այլ եւ անձառ խոնարհութեամբ 'ի ծունկս եկեալ լուացի զոտս ծառայիցոյ իմոց եւ Տէրս եւ վարդապետս : Զի թերեւս խորագոյնս տպաւորեցի 'ի հոգւոջ ձերում կնիք հեզութեան իմոյ : Եւ նշան սիրոյ պատուիրանիս զրոշմեացի 'ի ճակատս ձեր :

Այլ ո՞ւր սրդ այս նշան , որ դեակք իմ , ոչ տեսնեմ 'ի ձեզ : Դրոշմ երկրաւոր հովուին անջինջ մնայ յականջս անբան ոչխարաց . որով ճանաչին եւ որոշին յայլոց . իսկ երկնաւոր եւ քաջ հովուիս դրոշմ՝ եղծեալ է իտառ յականջաց ձերոց . չգիտեմ թէ որով նշանաւ կարացից ճանաչել զձեզ : Զայլ իմն օտար նշան տեսնեմ 'ի ձեզ աւատիկ , որով անձանթանայք յինէն . զի՞նչ , նշան՝ ոչ սիրոյ , այլ ատերութեան , նշան՝ ոչ խաղաղութեան , այլ խռովութեան , նշան՝ ոչ միաբանութեան , այլ երկպառակութեան , նշան՝ ոչ հեզութեան , այլ գողողութեան . նշան՝ ոչ խոնարհութեան , այլ հպարտութեան : Ոտք աւետարանչացոյ խաղաղութեան՝ արդ ոչ ընթանան 'իշաւիղ յանձուկ ճանապարհին խոնարհութեան , որ տանի յերկինս . այլ յընդարձակ ճանապարհս փառասիրութեան :

Բեզ ասեմ , Պետրէ , զի՞ դու առաւել քան զամենայն բռնանա

տիրել 'ի վերայ եղբարցդ : Արդ խոնարհեալ 'ի ծունկս եւ Տէր փառաց կրկին լուանալ զոտս քո յանձն առնում , զի թերեւս ամաչելով պատկառեցիս : Յուշ լիցի քեզ բանն զոր խօսեցար ընդիս յերեկոյնին հինգ շաբաթուն . “ Ոչ լուացես զոտս իմ յաւիտեան » եւ սարսելով զոտս առ 'ի քեզ ամիտփէկր . բայց այժմ զի՞ է քեզ զոտս քոյն պարզելով՝ կամիս համբուրել տալ ամենեցուն :

Ո՞վ մեծի հպարտութեանդ , այդ իցէ օրինակ ծայրագոյն խոնարհութեանս , զոր դործով իսկ ուսուցիք քեզ եւ ամենայն աշակերտացդ . զի արդ վաղ մոռացայք զիմ պատուէր եւ իտառ 'ի բաց տարայք յաչաց ձերոց զօրինակն , եւ ընդ հակառակն վարիք հեզ եւ խոնարհ վարդապետիս : Յաճուն այրն բեթւէ հեմի բաւական եղեւ աղբատածին Աստուածութեանս . ձեզ ոչ բաւեն արքայախայելուչ շքեղ ապարանք . չգոյր գոյզն ինչ տեղի գլխոյս , ուր գէթ դնէր զգլուխ իւր Որդի մարդոյ , դուք զաշխարհ գրաւեալ՝ տակաւին ջանայք ընդարձակել եւ լայնել զտեղի գլխոյ ձերոյ : Շատ եղեւ ինձ էջն դանդաղ , յորոյ վերայ նստեալ իբրութագաւոր մտի յերուսաղէմ . այլ դուք յերկարս բարձրապարանոց եւ 'ի կառս ձիախրոխտ նստեալ պերճանայք փառօք :

Արդեօք այդ իցեն կսոք եւ երկարք հրեղէնք , որովք յափշտակելոց իցէք ընդ առաջ իմ յօդս : Ո՞ւր է խաչն քո , Պետրէ . զոր խոստացար առնուլ եւ դալ զկնի իմ ,

արդ կամիս դու . զի ամենեքեան
 զինի քո եկեացեն . ընդէր ոչ ճանա-
 չես զիրաւունս քո , ո՞րպէս ջանաս
 յաիշտակել զվատակս ընկերացդ ,
 զինչ կարծես , քեզ միայնո՞յ տուան
 յինէն փականք երկնից արքայու-
 թեան : որով ժպրհիս քեզէն առանց
 իրաւանց բանալ՝ որոց կամիս , եւ
 փակել՝ որոց չկամիս : Եթէ փա-
 կանքն են իշխանութիւն . զայս մի-
 այն քեզ եւ ՚ի բերան քո՞ եղի . ոչ ա-
 պաքէն ամենայն աշակերտք իմ ըզ-
 նոյն զօրութիւն իշխանութեան ըզ-
 գեցեալ ընթացան յամենայն աշ-
 խարհ եւ բացին հանուր հեթանո-
 սաց զդուռն արքայութեան :

Ուր , Պետրո՛ւ , զայս վերջին քեզ
 պատուիրեմ խրատ . զի զսուր իշխա-
 նութեանդ ՚ի պատեան բերանոցդ
 դարձուցեալ լուսցիս . եւ մի յանի-
 րաւի վերացուցեալ ՚ի վերայ եղ-
 բարցդ շողացուցաներ կամ հարկա-
 նել եւ վիրաւորել , եւ յուշ ՚ի քեզ
 բերեալ ծանիր ճշմարտութեամբ եւ
 թէ չունիս դու բնաւ իշխել ՚ի
 վերայ եղբարցդ . այլ ես հաւատար
 եւ գործակից նոցին եւ ամենեքին
 դուք եղբայր էք . եւ ոչ որ ՚ի
 ձէնջ կարէ կոչիլ հայր կամ ուսու-
 ցիչ . զի ես միայն եմ հայր եւ ուսու-
 ցիչ ձեզ :

Հապա զդատացարուք յան-
 ձինս ձեր եւ մի բռնանայք ՚ի վե-
 րայ միտեանց կամ զկծեցուցիչ բան-
 իւք արհամարիցէք զիրեարս , կամ
 օտարացեալք ՚ի ճշմարտութենէ՝ նոր
 եւ թիւր վարդապետութեամբ վտա-
 րանդի առնիցէք զեկեղեցի իմ զոր
 շինեցի չարչարանօք արեամբ եւ
 խաչիւ :

ՊԵՏՐՈՍ եւ այլ Առաքեալք . Տէր
 դու զխոսեա եւ դու խակ զամենայն
 ճանաչես . եթէ տրուպ , եւ ազբատ
 աշակերտք քո մինչ ՚ի վերնատուն
 ընկալան զաւետիս Հօր ՚ի բարձանց
 եւ հասու եղեն խորհրդոց աւետա-
 րանական հեղութեան . ոչ երբէք
 ես եւ ոչ այլ գործակից իմ առա-
 բեալք վարեցան այդու իշխանու-
 թեամբ , որ հակառակ է խոնարհ
 թագաւորութեան քոյին . այլ որպէս
 ուսաք ՚ի քէն զամենայն ինչ արա-
 յաք զտիեզերս աշակերտելով աւե-
 տարանիդ եւ զամենեսին որաարով
 յուռկան արքայութեանդ . կոչեցաք
 զմեզ ծառայ անախտան եւ զոր
 պարտն էր առնել արարաք :

Հապա զյանգլխանութիւն քոյ-
 ին , Տէր , մի առ մեզ , այլ դարձո
 առ հովիւս եկեղեցւոյ յեռին դա-
 րուց եւ առաւել եւս առ գահն իմ
 Պետրոսեան , որոյ վասն պատկառիմ
 եւ ես մինչ տեսանեմ թէ յոյժ նը-
 ուաղեալ պակասեցան Պետրոսիս հե-
 տեւողք , եւ ջանան ամենեքին ախ-
 րել ՚ի վերայ վիճակաց բան թէ լի-
 նել օրինակ հօրին . զորս զգատա-
 ցուցի եւս յառաջագոյն առաքե-
 լական թղթովս :

Մի յիս բարկանար , Տէր , որով
 հետեւ արժանացայ ընդ Տեառնդ
 իմում խօսիլ , այլ ես հող եմ եւ մո-
 խիր ըստ Նահապետին արդարոց եւ
 խոստովանիմ ճշմարտապէս , եթէ ոչ
 երբէք կամիմ , ինձէն պարծենալ
 կամ ամբարտաւանիլ մտօք , զի դու
 ես միայն ճշմարիտ վէմ , եւ գլուխ
 եկեղեցւոյ , իշխան եւ դատաւոր
 հանուր հաւատացելոց ՚ի քեզ : Այս
 է ահա , ով Տէր , իմ խոնարհ աշա-

կերտիս հեղութեան դաս. զոր ուս-
եալ եւ պահեալ եմ եւ այլ ոչ եւս
յաւելում կրկնել :

Օ Էրոյոսն

Կարելի է որ գտնուին անանկ
մարդիկ, որ խելացութիւն սեպեն
ջրել ինչ որ իրենց նախնիքը հաւ-
տացերեն, կարծելով թէ հանձարի
աէր մարդոց համար հաւատք ու-
նենալը ամօթ մը ըլլայ : Անշուշտ
ասանկ սեպօղները թեթեւամիտ եւ
հարեւանցի մարդիկ են, եւ այսօր-
ման օրս ոչ յարգ ունին, ոչ ալ
բազմաթիւ են Եւրոպայի մէջ : Յե-
տագայ խօսքերը, զոր ուշիմ պա-
տանի մը թարգմանած է, կարծենք
թէ այնչափ աւելի ազգու պիտի
ըլլան, որչափ հեղինակին անունը
համբաւուած է իբր անհաւատ փի-
լիսոփայ : Ահա յայտնի կըլլայ որ
էն մեծ եւ էն ապստամբ միտ-
քերն անգամ կը խոնարհին Աւե-
տարանին սրբութեանը եւ Քրիստո-
սական ճշմարտութեան առջեւ,
եւ գոյնստէ զատ ուրիշ բան չեն
գտներ ըսելու սուրբ գրոց վը-
րայ : Արծիւը յօժարակամ կը հը-
րատարակէ այս յօդուածը, մանա-
ւանդ անոր համար որ ազնիւ թարգ-
մանն ալ նոյն գիտաւորութեամբ
թարգմանած է եւ իր աշխատու-
թեան հրատարակութիւն խրախօյս
մը կըլլայ իրեն նոր նոր թարգմա-
նութիւններ ընելու, որոնց մէջէն
քնտրանօք հրատարակել կը խոստա-
նամք, ինչ որ ընթերցօղներուն

համար ալ բարոյական օգուտ մը
կըրնան ընծայել :

ԱՒԵՏԱՐԱՆ

Սուրբ գրոց վսեմութիւնը զիս
կը զարմացընէ, Աւետարանին սրբու-
թիւնը սրտիս կը խօսի : Նայէ ի-
մաստասէրներուն զարգարուն գիր-
քերը, որչափ փոքր են Աւետարա-
նին քով. կարելի՞ բան է որ ասանկ
հոյակապ եւ միանգամայն ասանկ
պարզ գիրք մը, մարդկանց գործն
ըլլայ. կարելի՞ բան է որ այն՝ որուն
պատմութիւնը կընէ Աւետարանը,
մարդ մը եղած ըլլայ. մոլեռանդի
մը կամ փառասէր աղանդապետի
մը բերան կը նմանի՞ անի. քանի՞
քաղցրութիւն, քանի՞ անարատու-
թիւն իւր բարբի՛ն մէջ, քանի՞ շը-
նորհ սրտառուչ իւր վարդապետու-
թեանցը մէջ, քանի՞ վսեմութիւն
իւր առածներուն մէջ, քանի՞ խո-
րին իմաստութիւն իր խօսքերուն
մէջ, քանի՞ մտքի կորովութիւն,
քանի՞ ճարտարամտութիւն եւ ինչ
ճշգրտութիւն իւր պատասխաններուն
մէջ. ո՞ր է այն մարդը, ո՞ր է այն
խնաստուը որ գիտէ գործել, չար-
չարիլ եւ մեռնիլ, առանց տկա-
րութեան եւ առանց ցոյցքի : Երբ
Պղատոն կը նկարէ իւր երեւակա-
եալ արգաթը առաքինութեան վայ-
լած ամենայն մեծարանաց արժա-
նի եւ զանի մեղաւորի մը վայլած
նախատինքներով կը ծածկէ՝ նոյն եւ
նման գՅիսուս Քրիստոս կը նկարա-
գրէ. նմանութիւնը այնքան աչքի
կը զարնէ. որ բոլոր Հայերը զգա-
ցին եւ անկարելի է ատոր վրայ խաբ-

ուիլ : քանի կանխակալ կարծիք ,
 քանի կուրուծիւն պէտք է ունե-
 նալ բաղդատել համարձակելու հա-
 մար Սօֆոսիզքային որդին Մարի-
 ամի Ռդուն հետը : Ռ՛րչափ հեռի
 են իրարմէ . Սոկրատ առանց չար-
 չարանաց եւ առանց նշաւակու-
 թեան մեռնելով , մինչեւ վերջը
 գիւրաւ ինքզինքը կը բռնէ . եւ
 թէ որ այս գիւրին մահը պատիւ
 բերած չըլլար անցուցած կեանք-
 ին , երկբայելի պիտի ըլլար , թէ ար-
 դեօք Սոկրատ իւր բոլոր խելքովը
 ուրիշ բան մըն էր , քան թէ իմաս-
 տակ մը : Բարոյական իմաստասիրու-
 թեան հեղինակն է կրսեն . ուրիշ-
 ները իրմէն առաջ այն բարոյականը
 գործով ցուցած էին . Սոկրատ մը
 այն անոնց ըրածը ըսաւ . միայն ա-
 նոնց օրինակները դաս տուաւ .
 Սոկրատ տակաւին արդարութեան
 ինչ ըլլալը չը ճառած՝ Արիստոտէս
 արդար եղած էր . Սոկրատ հայրե-
 նիքը սիրելը դեռ պարտք մը չը
 սեպհականած , լէօնիտաս իւր հայ
 բենեացը համար մեռած էր . Սոկ-
 րատ դեռ զգաստութիւնը չը գո-
 ված , Սպարտայ զգաստէր . Սոկրատ
 առաքինութիւնը չը գոված՝ առա-
 քինի մարդիկ շատ կային Յունաս-
 տանի մէջ . բայց Յիսուս հրէից մէջ
 որմէ՞ առած էր այն բարձր եւ
 սուրբ բարոյականը՝ որուն դասն եւ
 օրինակն ինքն միայն տուաւ . յիմար
 եւ անիմաստ Հրէից ազգին ծոցէն
 գերազոյն իմաստութեան ձայնը լս-
 վեցաւ . եւ դերաշխարհիկ առաքի-
 նութեանց պարզութիւնը յարգ եւ
 պատիւ բերաւ աշխարհիս էն անարդ
 ժողովուրդին : Սոկրատի մահը ,

հանդարտիկ իւր բարեկամներուն
 հետ իմաստասիրելով , էն քաղցր
 մահն է , որուն կարելի ըլլայ ցան-
 կալ . Յիսուսի մահը որ չարչարանաց
 մէջ բովանդակ ժողովուրդէ մը նա-
 խատեալ , ծաղր եւ ծանակ ըլլալով
 հոգին աւանդեց , էն սոսկալի
 մահն է , որմէ կարելի ըլլայ երկնչել :
 Սոկրատ թիւնալից բաժակը ձեռք
 առնելով , զանի իրեն մատուցանող
 մարդը կօրհնէ , որ կուլայ մատու-
 ցանելու ատենը . Յիսուս սոսկալի
 չարչարանքի մը մէջ իւր կատաղի
 դահիճներուն համար աղօթք կընէ :
 Այն , թէոր Սոկրատի կեանքը եւ
 մահը իմաստունի մըն են , Յիսուսի
 կեանքն ու մահն ալ Աստուծոյ
 մըն են :
 ՌՌՒՍՕ .

ԹԱՐԳ . ՅՈՒ . Կ . ՆՈՒՐԵԱՆ



ԲԱՐՅԱԿԱՆ ԱՌԱԿ

Մեղու գործասիրութեամբ ըզ-
 ծաղիկ եւ զմո՛մ եւ զմեղր ժողովէ
 եւ կազմէ զգործ իւր :
 Ուսիր յառակէս ըստ կարի
 բան գրոց ժողովել , եւ գրոյս օրի-
 նաց զքաղցր վարդապետութիւն
 վրկչին՝ իբժշկութիւն ողւոյ :

ՄԻՒԹԱՐ ԳՕՇ



1875
MAY 10 1875

RECEIVED

OF THE

STATE OF

THE

RECORDS

Faint text at the bottom of the page, possibly a signature or date.

ՅԵՆԿ

ՊԵՐՈՒՆԵԱԿԵԱԿ ԵՒ ԹՈՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Որի փառասիրութեան 129

ՏՐԵՄԱՍՕՈՒԹԻՒՆ

Հանգեա հակառակութեան Հաղարայկեացն Քրիստոսի Թաղա սրութեան . . . 152

Աւետարան 145

ՊԵՅՄԱՆԻ ԲՆԱԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան գին 40 դուռուշ :
Մի ամեակ աւարակին 4 :
Պօլսէն դուրը կրթալու ճամբուն ծախքը առնող պիտի վճարէ :

ՏԵՂԻՔ ԱՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՏԵՅՄԱՆ

- Ի Պօլս գրաւաճառ պարոն Յարութիւնին եւ պարոն Պաղտասարին սենեակները որ ՚ի Մէրճան :
- Ի Զմիւռին ուսումնասեր պարոն Սարգիս Գրիգորեան տէր Յովհաննու Մրդայեանց Վանանցի :
- Ի Վարին տէր Ներսիսեանց մեծարգոյ Խաչատուր խան :
- Ի Բերիս վաճառատուն Աղգասէր Յովհաննէս Աղայի Միսաքեան :
- Ի Վան Թերթեմեզեան պարոն Մ'կրտիչ :

